ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« --- » ապրիլի 2014թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ

ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արամի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու փողոցների և Մ. Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածում գտնվող պուրակն անվանակոչել հայ անվանի բանաստեղծ, Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանի անվամբ՝ «Միսաք Մանուշյանի անվան պուրակ»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ անվանի բանաստեղծ, ֆրանսիական Դիմադրության շարժման մարտիկ և Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանը ծնվել է 1906 թ. Արևմտյան Հայաստանում:

1930-ական թթ. Մ. Մանուշյանն աշխատել է Հայաստանի օգնության կոմիտեում, խմբագրել «Զանգու» /1935-37թթ., Փարիզ/ շաբաթաթերթը, որտեղ տպագրել է նաև իր բանաստեղծությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմի /1939-45թթ./ առաջին իսկ ամիսներին Մ. Մանուշյանն ակտիվորեն մասնակցել է գերմանական զավթիչների դեմ ֆրանսիացի հայրենասերների մղած պայքարին՝ Դիմադրության շարժմանը:

Ֆրանսիացի բանաստեղծ Լուի Արագոնը նրանց հիշատակին է ձոնել «Մանուշյանի խումբը» բանաստեղծությունը, որը հետագայում վերածվել է երգի:

1946թ. Փարիզում լույս է տեսել Միսաք Մանուշյանի բանաստեղծությունների ժողովածուն, իսկ 1956թ. վերահրատարակվել է Երևանում՝ «Իմ երգը» խորագրով:

Մ. Մանուշյանի և նրա խմբի մարտիկների անուններով փողոցներ, դպրոցներ, պուրակներ են անվանակոչվել Փարիզում, Մարսելում և Ֆրանսիայի այլ քաղաքներում, տեղադրվել են հուշարձաններ, ինչպես նաև Փարիզում Մ. Մանուշյանի ապրած տան պատին փակցված է հուշաքար: Ամեն տարի փետրվարի 26-ին Ֆրանսիայում հարգանքի տուրք է մատուցվում Մ. Մանուշյանի հիշատակին:

Ֆրանսիայի կառավարությունը Մ. Մանուշյանին հետմահու պարգևատրել է «Պատվո լեգեոնի» շքանշանով:

Մ. Մանուշյանի և նրա մարտական ընկերների մասին ֆրանսահայ ռեժիսոր Ռոբեր Գեդիկյանը նկարահանել է «Ոճրագործության բանակ» կինոնկարը :

Երևանում և Գյումրիում նույնպես նրա անունով անվանակոչվել են փողոցներ և դպրոցներ:

Հայ անվանի բանաստեղծ Մ. Մանուշյանի բանաստեղծությունները տպագրվել են սփյուռքահայ մամուլում 1930-ական թթ. սկզբներից: Նա հեղինակ է բազմաթիվ հայրենասիրական, քաղաքական և քնարական բանաստեղծությունների /«Պայքար»,

«Ընդվզում», «Նամակ Հայաստանեն», «Ամբոխի կանչը» և այլն/ :

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշման հաստատված կարգի (այսուհետև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումները, սույն բաժնի կանոններին համապատասխան, ընդունում են համայնքների ավագանիները:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով Միսաք Մանուշյանի գործունեությունը և մեծ ավանդը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Արամի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու փողոցների և Մ. Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածում գտնվող պուրակն անվանակոչել հայ անվանի բանաստեղծ, Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանի անվամբ՝ «Միսաք Մանուշյանի անվան պուրակ»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Միսաք Մանուշյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Միսաք Մանուշյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ